



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄԱՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԹԵՍԻՍ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԿԻՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԱՏԵՆԱՊԵՏԵՏՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Արեւմտեան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգային Վարչութեան հրաւրով, Զորեքաբթի, 1 Օգոստոսի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան Եւ Զարուհի Տէր Դազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ համախմբում-ժողով, որ ի մի բերաւ մեր Թեմի Եկեղեցիներուն հոգեւոր հովիւներն ու հոգաբարձութեաց ատենապետները: Խանդիպումին նպատակն էր խորհրդակցութիւն ունենալ ծխական շրջաններու աշխատանքներուն յաւելեալ մղում տալու միջոցներուն մասին, ապա նաեւ քննարկել ու լուծումներ որոնել այդ աշխատանքներուն ըլթացքին դիմագրաւուած զանազան հարցերուն:

Ժողովը սկսաւ ժամը 7:45ին, աղօթքով: Առաջնորդ Սրբազանն ու Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան ողջունեցին ներկաները Եւ բացատրեցին ժողովին նպատակն ու հեռանկարները, վեր առնելով այս հարցերը, որոնք կը կարօտին յատուկ հոգածութեան ու գործակցութեան:

Ծխական շրջաններու ներկայացուցիչները արծարծուած հարցերուն մասին փորձառութիւններ փոխանակեցին, ինչպէս նաեւ ներկայացուցին որոշ մտահոգութիւններ, որոնք հասարակաց քնոյթ ունին: Բոլորի վկայութեամբ, ժողովին այս բաժինը եղաւ շահեկան, որովհետեւ փորձառութեաց փոխանակումն ու հարցերու միատեղ քննարկումը օգուտ բերաւ ու բարից կը խստանայ բոլորի աշխատանքներուն:

Ժողովի աւարտին, Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներն ու ներկաները հաստատեցին, թէ Նման հանդիպումներ պետք է կազմակերպել որոշ հերթականութեամբ ու մնայուն կաա ստեղծել փորձառութեաց բաժնեկցութեան համար:

MEETING OF PRELACY PASTORS AND BOARDS OF TRUSTEES CHAIRMEN

On the evening of Wednesday, August 1st, by the invitation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council, Prelacy Pastors and Boards of Trustees Chairmen met at "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. The primary purpose of the meeting was to discuss

means of invigorating the activities of the parishes, as well as to examine and resolve any issues that may be affecting the parishes.

The meeting convened with a prayer, followed by welcoming remarks by the Prelate and Executive Council Chair Dr. Garo Agopian, both of whom also expanded on the objective of the meeting. Throughout the meeting, parish representatives had the opportunity to share their experiences as well as to express concerns. Given the positive feedback received from the participants, the Prelate and Executive Council plan to organize similar gatherings in the future to allow for the exchange of ideas and suggestions.